Գործադիր օրինակ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության

և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև

Առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ

Օժանդակության համաձայնագրի

Փոփոխություն 3

Սեպտեմբեր 29, 2012թ.

ԱՄՆ ՄԶԳ Օժանդակության Համաձայնագիր

ԱՄՆ ՄԶԳ օժանդակության համաձայնագիր թիվ Aag-111-g-10-002

2010թ. օգոստոսի 6-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության՝ ի դեմս ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), և Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Դրամաշնորհ ստացող) միջև Առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ կնքված օժանդակության համաձայնագրի **Փոփոխություն թիվ 3**

2010թ. օգոստոսի 6-ին Դրամաշնորհ ստացողը և ԱՄՆ ՄԶԳ-ը Օժանդակության Համաձայնագիր են կնքել սոցիալական և առողջապահական ծառայությունների արդյունավետության բարելավման նպատակով՝ համաձայն նշված Օժանդակության Համաձայնագրի (Այսուհետ՝ Համաձայնագիր) Հավելված 1-ի (Գործունեություն):

Դրամաշնորհ ստացողը և ԱՄՆ ՄԶԳ-ը ցանկանում են փոփոխություններ կատարել Համաձայնագրում ա) ԱՄՆ ՄԶԳ կողմից տրամադրվող ընդհանուր գումարը $18 155 650-ից մինչև $ 23 157 650 ավելացնելու նպատակով՝ այսպիսով տրամադրելով $ 5 002 000 լրացուցիչ ֆինանսավորում թիվ Aag-111-g-10-002 Համաձայնագրի իրականացման համար, ինչպես նաև ավելացնել ընդհանուր հաշվարկված ներդրումը մինչև $23 157 650:

Այսպիսով՝ Համաձայնագրի կողմերը համաձայնում են Համաձայնագրում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

1. Բաժին 3.1-ի («ԱՄՆ ՄԶԳ ներդրումը») առաջին պարբերությունը (3.1.ա) փոխարինվում է հետևյալով.

ա) Դրամաշնորհ: Սույն Համաձայնագրով սահմանված Նպատակի իրականացմանն օժանդակելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն, համաձայն 1961թ. Օտարերկրյա օժանդակության որոշման, սույնով Դրամաշնորհ ստացողին է շնորհում քսաներեք միլիոն հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր հիսուն ԱՄՆ դոլարը ($23 157 650) չգերազանցող գումար (այսուհետ՝ Դրամաշնորհ):

2. Համաձայնագրի 3.1. (բ) բաժինը «Ընդհանուր նախատեսվող ներդրումը») փոխարինվում է հետևյալով.

> բ) ԱՄՆ ՄԶԳ ընդհանուր նախատեսվող ներդրումը. Նպատակի իրականացման համար ԱՄՆ ՄԶԳ ընդհանուր հաշվարկված ներդրումը կկազմի քսաներեք միլիոն հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր հիսուն ԱՄՆ դոլար ($23 157 650), որը կտրամադրվի փուլ առ փուլ: Հաջորդող մասերը կախված կլինեն ԱՄՆ ՄԶԳ Նպատակի համար նախատեսվող գումարների առկայությունից, և ԱՄՆ ՄԶԳ կողմից կտրամադրվեն Դրամաշնորհ ստացողին վերջինիս գրավոր ծանուցում ուղարկելուց հետո: Կողմերը համաձայնում են, որ յուրաքանչյուր աճող գումարը կավելացնի 3.1-ին բաժնում սահմանված Դրամաշնորհի ընդհանուր գումարը, և, հետևաբար, կարող է ավելանալ 3.2-րդ բաժնում սահմանված Դրամաշնորհ ստացողի ներդրումը: Դրամաշնորհ ստացողը համաձայնում է գրավոր ծանուցումով տեղեկացնել ԱՄՆ ՄԶԳ-ին յուրաքանչյուր նման աճող ներդրման կապակցությամբ:

3. Բաժին 3.2-ի («Դրամաշնորհ ստացողի ներդրումը») երկրորդ պարբերությունը (3.2. բ.) փոխարինվում է հետևյալով.

բ) 3.1.ա բաժնով նախատեսված՝ ԱՄՆ ՄԶԳ ներդրման վրա հիմնված՝ Դրամաշնորհ ստացողի ներդրումը չի կարող պակաս լինել բնաիրային ներդրումով արտահայտված յոթ միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար քսանչորս ($7 642 024) ԱՄՆ դոլարի համարժեքից, որը կտրամադրվի ներկա բյուջեի միջոցներից: Եթե ԱՄՆ ՄԶԳ-ն ավելացնի 3.1.ա բաժնով սահմանված Դրամաշնորհի գումարը, Դրամաշնորհ ստացողի ներդրումը կաճի, համապատասխանաբար, յուրաքանչյուր մասնաբաժնի հետ, որպեսզի Դրամաշնորհ ստացողի ներդրումը պակաս չլինի Դրամաշնորհի գումարի այն գործունեությանն օժանդակելու համար մասի մեկ երրորդից, որը կամ ուղղակիորեն զգալի շահ է ներկայացնում ՀՀ Կառավարության համար, կամ ներառում է ՀՀ Կառավարության ուղղակի և զգալի ներգրավվածություն այդ օժանդակության վարչարարության, վերահսկման կամ կառավարման հարցում: Դրամաշնորհ ստացողի ներդրման ճշգրիտ գումարը պետք է նշվի յուրաքանչյուր աճող ներդրման վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ գրավոր ծանուցման մեջ: Նպատակի իրականացման համար Դրամաշնորհ ստացողի ընդհանուր նախատեսված ներդրումը կախված է Դրամաշնորհ ստացողի բյուջետավորված միջոցների հասանելիությունից այս նպատակի համար և ԱՄՆ ՄԶԳ կողմից 3.1.բ բաժնում նշված ընդհանուր հաշվարկված գումարի տրամադրումից: Դրամաշնորհ ստացողը առնվազն տարեկան հաշվետվություններ պետք է ներկայացնի իր կանխիկ և բնաիրային ներդրումների վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ հետ համաձայնեցված ձևաչափով:

4. Հավելված 1 (Ա)-ն «Ֆինանսական պլան» փոխարինվում է հետևյալով.

Նպատակը	Ծրագրային ոլորտ	Նախորդ հատկացում	Տվյալ փոփոխություն	Ընդհանուր հատկացում
Մարդկային ռեսուրսների ներդրումներ	Առողջապահություն	10 850 650	2 572 000	13 422 650
	Առողջապահական, սոցիալական և տնտեսական ծառայություններ, Խոցելի բնակչության պաշտպանություն	7 305 000	2 430 000	9 735 000
ԸՆԴԱՄԵՆԸ		**18 155 650**	**5 002 000**	**23 157 650**

5. Բացի նշված կետերից, Համաձայնագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ, ուժի մեջ են և վավերական:

Գործադիր օրինակ

Ի հաստատումն որի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունը՝ յուրաքանչյուրն ի դեմս իր կողմից լիազորված ներկայացուցչի, որոշեցին, որ սույն Համաձայնագիրը պետք է ստորագրվի իրենց անունից և պաշտոնապես հանձնվի վերը նշված ամսաթվին:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության կողմից՝	Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝
Քարեն Ռ. Հիլիարդ	Տիգրան Դավթյան
ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության տնօրեն	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար
Ամսաթիվ	Ամսաթիվ

2010թ. օգոստոսի 6-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև Առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ կնքված օժանդակության համաձայնագրի Փոփոխություն թիվ 3

USAID | ARMENIA
FROM THE AMERICAN PEOPLE

29 սեպտեմբերի, 2012թ.
Երևան

Երևան 375010, Մ. Մկրտչյան փ. 5
ՀՀ էկոնոմիկայի նախարար
պարոն Տիգրան Դավթյանին
Առարկան՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև Առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ կնքված Օժանդակության համաձայնագրի Փոփոխություն թիվ 3

Ref. Օժանդակության համաձայնագիր թիվ Aag-111-g-10-002

Իրականացման նամակ թիվ 15

Հարգելի պարոն Երիցյան

Համաձայն Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության՝ ի դեմս ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), և Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Դրամաշնորհ ստացող) միջև Առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ կնքված օժանդակության համաձայնագրի Հավելված 2-ի Հոդված Ա.1-ի՝ սույն Իրականացման նամակով կից ներկայացվող Համաձայնագրում կատարվում է հետևյալ փոփոխությունը.

3.1.ա ,3.1.բ, 3.2.բ կետերը և Հավելված 1 (Ա)-ն փոփոխվում են համաձայն Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև Առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ կնքված թիվ Aag-111-g-10-002 օժանդակության համաձայնագրի **Փոփոխություն թիվ 3-ի**:

Խնդրում եմ ստորագրել կից ներկայացվող թիվ Aag-111-g-10-002 օժանդակության համաձայնագրի Փոփոխություն թիվ 3-ը՝ Ձեր կողմից փոփոխությունների ընդունումը հավաստելու նպատակով: Սույն նամակի կամ նշված գործունեության վերաբերյալ հարցերի դեպքում խնդրում եմ դիմել ինձ:

Ընդունեք, խնդրում եմ, մեր խորին հարգանքի հավաստիքը:

Հարգանքով՝

Քարեն Ռ. Հիլիարդ
ԱՄՆ ՄԶԳ տնօրեն

Ամսաթիվ _____

Կից ներկայացվում է՝ Օժանդակության համաձայնագիր թիվ Aag-111-g-10-002-ի Փոփոխություն թիվ 3

U.S. Agency for International Development
1 American Avenue
0082 Yerevan, Armenia
Tel: (3741) 464-700
Fax: (3741) 464-742